

կլորակ խորշի մը մէջ, եկեղեցիին ընդհանուր յատակէն քանի մը ոտք ցած, վերջերը ժայռի մը վրայ, զանազան դարեր՝ զանազան մեծութեամբ: Ի սկզբան աւելի ցած քան հողին հաւասարութիւնը. Խաչակիրներու ժամանակ, վասնզի եկեղեցիին յատակը աւելի բարձր էր քան առաջ, ոտնատեղիները աւելի խոր էին, և զանոնք տեսնելու համար վար պէտք էր նախիկ կլորակ խորշի մը մէջ: Աւելի ուշ մէկ ոտքի հետքը կար՝ քիչ մը աւելի բարձր Խաչակրաց եկեղեցիի յատակէն: Նոյն հետքը քարի մը վրայ էր (ոչ թէ ժայռի) և բնական մեծութեամբ, ու մինչև հին ժամանակները կրկին բնական մեծութիւն ունէր, և ժողովուրդը կը յարգէր զայն շատ անգամ շօշափելով եւ համբուրելով: Փելիքս Ֆապրի կը պատմէ մեզ թէ իր ուխտաւոր ընկերներէն մին ոտնատեղիին կազմուած խորշին մէջ գինի լեցուցած է և խորշին մէջ մնացածը լիզած: Ի՞նչ քրիստոնեաներն ու մահմետականները մինչև հիմակ կը պատուեն նոյն տեղը» (P. E. F. 1896, էջ 326):

Փելիքս Ֆապրի ուղեգիր – ուխտաւորին (1484) բուն խօսքերը ասոնք են. «Քրիստոսի Համբարձման տեղւոյն ժայռին վրայ դրոշմուած կը տեսնուին Յիսուսի ոտքերուն հետքերը, աջ ոտքին դրոշմը ամբողջական է: Այս հետքերը Քրիստոնեաներ կը համբուրեն, նմանապէս Սարակինոսները: Մեր հետ գտնուող ուխտաւորներէն մին բարեպաշտութեամբ լեցուած իր հետ ունենալով շիշ մը ընտիր գինի, անով կը մաքրէ ոտնատեղւոյն փոսը, ուրկէ մնացեալ գինին դուրս կը հանէին իրենց համբոյրներով, և այս կերպով փոսը աւելի մաքրուած կը դատարկանար: Եկեղեցիին հիւսիսային կողմը պատին մէջ խորշ մը կար